ՎԵՐՈՆԻԿԱ ԹՈՐՈՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԻՄՆԱԽՆԴՐՈՒՄ ԱՄՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայրենիքում գործունեություն ծավալող քաղաքական ուժերը, այդ թվում գործող իշխանությունները, հաճախ փորձում են իրենց սփյուռքը և դրա լոբբիստական կառույցներն օգտագործել իրենց ռազմավարական և տնտեսական նպատակների համար: Հոդվածը նպատակ ունի Հյուսիսային Կիպրոսի հիմնախնդրի օրինակով ցույց տալ՝ արդյո՞ք կարող են լոբբիստական խմբերը կամ լոբբինգով զբաղվող անհատները օգտագործվել հայրենիքում գործող իշխանությունների կողմից որպես «փափուկ ուժի» գործիք՝ միջազգային քաղաքական հարթակներում ցանկալի արդյունքի հասնելու համար: Միջամտելու պարագայում՝ ունենու՞մ են ազդեցություն էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացի վրա:

Կիպրոսի Հանրապետությունը ստեղծվել է որպես սահմանադրական հանրապետություն՝ հիմնված կղզու երկու ժողովուրդների՝ հույների և թուրքերի քաղաքական հավասարության գաղափարի վրա[1]: 1974 թ. թուրքական զինված ուժերի ռազմական ներխուժման արդյունքում, ստեղծվել է Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը: Այն Ճանաչվել է միայն Թուրքիայի կողմից, զբաղեցնում է Կիպրոս կղզու տարածքի շուրջ մեկ երրորդը: Կիպրոսի Թուրքական Դաշնային Հանրապետությունը հռչակվել է 1975 թվականին և 1983 թվականին վերանվանվել Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն[2]: Հարկ է նշել, որ միջազգային կա-

[1] Web portal of the Republic of Cyprus, http://www.mfa.gov.cy/mfa/mfa2016.nsf/mfa08_en/mfa08_en?OpenDocument
[2] North Cyprus News, Census results, հասանելի է՝ 05.06.2019,

ռույցների կողմից Կիպրոսում ճանաչվում է միայն Կիպրոսի Հանրապետության պաշտոնական իշխանությունը: Նման դիրքորոշման ձևավորման վրա, թուրքական կողմի իրականացրած ռազմական ներխուժման բացասական արձագանքից զատ, միանշանակ, ազդել է նաև հունական սփյուռքի ծավալած քարոզչությունը: Պետք է նշել, որ սփյուռքի համայնքները և լոբբիստական կառույցները, իրենց շահերից ելնելով, քաղաքականության մեջ գործունեություն են ծավալում հինգ մակարդակով.

Ա. հյուրընկալող երկրներում ներքին մակարդակ,

Բ. տարածաշրջանային մակարդակ,

Գ. տրանս-պետությունների մակարդակ,

Դ. ամբողջ սփյուռքի մակարդակ,

Ե. հայրենիքի քաղաքականության մակարդակ:

Օրինակ՝ Ամերիկայի Հելլենիկ Ինստիտուտը (AHI) շահույթ չհետապնդող հասարակական կենտրոն է[3], որն աշխատում է վերոնշյալ մակարդակներից առնվազն երկուսում՝ ԱՄՆ-ի և Հունաստանի, Կիպրոսի և ԱՄՆ-ի հունական համայնքի միջև հարաբերությունների ամրապնդման ոլորտներում:

Այդ մակարդակներից յուրաքանչյուրում սփյուռքի գործառույթները բաժանվում են երեք հիմնական դասակարգերի՝ սպասարկում, պաշտպանություն և իր սփռված համայնքների բազմաշերտ շահերի առաջխաղացում[4]:

Հոդվածում փորձ ենք արել վեր հանել ԱՄՆ-ում գործող լոբբիստական կառույցների ծավալած գործունեությանը՝ հաշվի առնելով Միացյալ Նահանգների հետաքրքրվածությունը Կիպրոսի հակամարտությամբ և կարևոր դերը՝ դրա լուծման գործընթացում: Կիպրոսի հարցում միջազգային և, մասնավորապես, ԱՄՆ հետաքրքրության գլխավոր պատճառը կղզու ռազմավարական նշանակությունն է:

---

http://northcyprusfreepress.com/2011/12/11/north-cyprus-news-census-results/

[3] American Hellenic Institute, https://www.ahiworld.org/who-we-are

[4] Sheffer G., Diaspora Politics, At Home Abroad, Cambridge University Press, 2003, p. 216.

Դեռևս Սառը պատերազմի ընթացքում կարևոր գործոններից մեկը, որը մեծ ազդեցություն ունեցավ Կիպրոսի հարցում Միացյալ Նահանգների դիրքորոշման վրա՝ Թուրքիայի ու Հունաստանի միջև հարաբերությունները բալանսավորելու նպատակն էր՝ ՆԱՏՕ-ի ներսում հնարավոր հակամարտություններից խուսափելու համար[5]: Այսպիսով, կարելի է նշել, որ 1950-ական թվականներին Թուրքիայի ու Հունաստանի միջև համաձայնագրի կնքումը նաև ԱՄՆ-ի նպատակաուղղված ջանքերի արդյունքն էր:

1963 թ. առաջին միջհամայնքային հակամարտությունից հետո[6], երբ Թուրքիան պատրաստվում էր ներխուժել կղզի, Միացյալ Նահանգների նախագահ Լ. Ջոնսոնի Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինյոնյուին ուղարկած նամակը[7] կարելի է համարել հինախնդրի վրա ԱՄՆ-ի ունեցած ազդեության առավել ցայտուն օրինակներից: Լ. Ջոնսոնը Թուրքիային արգելեց ԱՄՆ-ի կողմից մատակարարված ցանկացած ռազմական տեխնիկայի կիրառում՝ Կիպրոս ներխուժման համար: Կարելի է ենթադրել, որ նախագահ Լ. Ջոնսոնը, 1964 թ. ընտրություններում ԱՄՆ-ի հույն բնակչության աջակցությունը ստանալու համար, նախընտրեց չանել այնպիսի քայլ, որը կարող էր դիտարկվել հօգուտ Թուրքիայի:

Ինչպես արդեն նշվեց՝ որպես ՆԱՏՕ-ում թուրքական և հունական ուժերի հավասարակշռման քաղաքականության դրսևորում, 1974 թ. Թուրքիայի Կիպրոս ներխուժումից հետո[8] ԱՄՆ-ի կողմից զենքի էմբարգո մտցվեց Թուրքիայի դեմ: Որոշակի վերապահումներով կարող ենք արձանագրել, որ Սառը պատերազմից հետո Միացյալ

---

[5] Güney A., The USA's role in mediating the Cyprus conflict: A story of success or failure? Security Dialogue, 35(1), 2004, p. 27–42.

[6] The Cyprus Problem; historical review and the latest developments, Nicosia, 1995, p. 11.

[7] The New York Times, June 6, p. 1, հասանելի է՝ 04.10.19, https://www.nytimes.com/1964/06/06/archives/johnson-warns-inonu-on-cyprus-invites-him-to-us-for-talksturkey.html

[8] The Cyprus Problem, p. 16.

Նահանգների քաղաքականությունը Կիպրոսի հարցում չի փոխվել. թեև այլևս արդիական չէ գերտերությունների «զսպման» քաղաքականությունը, Կիպրոսը պահպանում է իր կարևորությունը ԱՄՆ արտաքին քաղաքականության դիսկուրսում՝ և՛ միջազգային և՛ տարածաշրջանային, և՛ աշխարհաքաղաքական տեսլականների իրականացման համար: Սառը պատերազմից հետո ԱՄՆ-ի դերակատարությունը հիմնախնդրի կարգավորման հարցում որոշակիորեն վերաձևակերպվեց: Չնայած բանակցային գործընթացը հակամարտող կողմերի միջև պետք է իրականացներ ՄԱԿ-ը, այդուհանդերձ ԱՄՆ կարող էր միջամտել՝ հնարավոր փակուղիների առաջացման դեպքում[9]: Կարծում ենք, որ Միացյալ Նահանգների նման գործառույթը ձեռնտու էր նաև ՄԱԿ-ին՝ Կիպրոսի բանակցությունների գլխավոր դերակատարին:

Հիմնախնդրում ԱՄՆ-ի ունեցած դերակատարության մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ, որ լոբբինգը Միացյալ Նահանգների քաղաքական կյանքի անբաժանելի բաղադրիչն է: Կարևոր է ընդգծել նաև, որ չնայած լոբբինգի դրսևորման ձևերն ու գործընթացները մեծապես կապված են սփյուռք-ընդունող երկիր փոխհարաբերություններով, դրա նպատակներն ու արդյունքները միանգամայն առնչվում են հայրենիք-սփյուռք երկկողմ գործակցությանը: Հունական սփյուռքի հզորությունը մասամբ պայմանավորված է հույն ամերիկացիների թվով: Արտերկրում բնակվող հույների թիվը կազմում է մոտ 8 մլն, որից շուրջ 2 միլիոնը ապրում է ԱՄՆ-ում (հունական ամենամեծ համայնքը)[10]: Չնայած ամերիկյան բնակչության մեջ նրանց համեստ քանակին, հույն ամերիկացիները ձգտում են կենտրոնանալ խոշոր քաղաքներում, ակտիվ են երկրի ներքին քաղաքական և ներհամայնքային կյանքում: Հույները կենտրոնացած են հատկապես ամերիկյան խոշոր կենտրոններ Նյու Յորքում, Բոստոնում և Չիկագոյում: ԱՄՆ-ի հունական սփյուռքի ներսում լոբբիստական գործունեություն

---

[9] Güney A., նշվ. աշխ., էջ 27-42:

[10] Նույն տեղում:

ծավալող հիմնական կառույց Ամերիկայի Հելլենիկ Ինստիտուտը[11] ձգտում է ամրապնդել ԱՄՆ-ի կապերը Հունաստանի հետ, վերացնել Հյուսիսային Կիպրոսի թուրքական բռնազավթումը, աջակցել Էգեյան ծովի ափին Հունաստանի ինքնիշխանության ամրապնդմանը[12]: Այս լոբբին ունեցել է մի քանի կարևոր հաջողություններ, որոնք ազդել են վերջին չորս տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հունական առանցքի վրա: Հելլենիկ Ինստիտուտի հիմնական հաջողությունն, անշուշտ, Կոնգրեսին արված առաջարկին դրական արձագանք ստանալն էր՝ 1975 թ. Թուրքիային զենք մատակարարելու վրա էմբարգո սահմանելու և հաջորդող երեք տարիների ընթացքում այն պահպանելու հարցում[13]: Միացյալ Նահանգների այս քայլը պատժամիջոց էր Թուրքիայի դեմ՝ ԱՄՆ-ի զինված ուժերը օգտագործելու համար՝ Կիպրոս ներխուժման ընթացքում, որն ուղղակիորեն խախտում էր 1968 թ. Սպառազինության արտաքին վաճառքի մասին օրենքը[14]: Հելլենիկ Ինստիտուտի կարևոր ձեռքբերումներից էր նաև Միացյալ Նահանգների կողմից Հունաստանին ռազմական օգնության տրամադրման պահպանումը՝ Թուրքիային տրամադրվող օգնության 70 տոկոսի չափով, Կոնգրեսի 1995 թ. Թուրքիային տրամադրվող տնտեսական դրամաշնորհային օգնության վերացումը և ԱՄՆ-ի կողմից ուղղակի առևտրի դադարեցումը Կիպրոսի հյուսիսային թուրքական հատվածի հետ[15]: Բացի այդ, Հելլենիկ Ինստիտուտը ուշադրություն է դարձնում Ներկայացուցիչների պալատում և Սենատում օրենսդրության և Կոնգրեսի այնպիսի բանաձևերի

---

[11] Համեմատական վերլուծության համար ընտրել ենք ԱՄՆ-ում առավել ակտիվ ու արդյունավետ լոբբիստական գործունեություն ծավալող Ամերիկայի Հելլենիկ Ինստիտուտի (AHI) և Ամերիկայի Թուրքական Կոալիցիայի (TCA) օրինակները:

[12] American Hellenic Institute, https://www.ahiworld.org/who-we-are

[13] Baştürk M., The Issue of Cyprus in the EU Accession of Turkey, Claremont–UC Undergraduate Research Conference on the European Union, p. 16.

[14] Մանրամասն տե՛ս https://www.govinfo.gov/content/pkg/STATUTE-82/pdf/STATUTE-82-Pg1320-2.pdf

[15] American Hellenic Institute, https://www.ahiworld.org/history

ընդունմանը, որոնք նպաստում են Հունաստանի շահերին, և այս լոբբին շարունակաբար ձգտում է դրանք առաջ տանել: Կարևոր է, որ այս կառույցը հետևողական և արդյունավետ է իր լոբբիստական գործունեության մեջ: Այն իր շտաբն ունի Վաշինգտոնում՝ Սպիտակ տնից քիչ հեռու, և մասնաճյուղեր՝ ամբողջ երկրում[16]:

Թուրքական շահերը ԱՄՆ-ում խթանող հիմնական կազմակերպությունը Ամերիկայի թուրքական կոալիցիան է (TCA)[17], թեև կա նաև թուրք-ամերիկյան այլ խմբավորումների լայն զանգված: Ամերիկայի թուրքական կոալիցիան համեմատաբար նոր կազմակերպություն է, որը ստեղծվել է 2007 թվականին: Այն իրականացնում է մի շարք սոցիալական, մշակութային և կրթական ծրագրեր, ինչպես նաև մասնակցում է բազմաթիվ քաղաքական իրադարձությունների՝ նպաստելու Թուրքիայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանի համար կարևոր հարցերի արծարծմանն ԱՄՆ-ում: Թուրքական լոբբիստական կառույցներն ակտիվորեն փորձում են ազդել Միացյալ Նահանգների՝ Հունաստանի հետ հարաբերությունների վրա, ինչպես նաև՝ Կիպրոսի խնդրի ու Էգեյան ծովում թուրքական ինքնիշխանություն հաստատելու հարցերի վրա[18]: ԱՄՆ-ում թուրք-ամերիկյան բնակչությունը հույն-ամերիկյան բնակչության թվաքանակի տասներորդ մասն է կազմում, հետևաբար, տեղական ընտրությունների քվեարկության հարցում այն նշանակալիորեն քիչ կարևոր օղակ և քարոզչական ներդրման աղբյուր է: Փոխարենը, թուրք լոբբիստները շեշտում են Թուրքիայի ռազմավարական նշանակությունն ԱՄՆ-ի համար, երբ ձգտում են իրենց հայրենիքի շահերը առաջ քաշել Կոնգրեսում կամ Գործադիր իշխանությունում: Այս կապակցությամբ թուրքական համայնքն ավանդաբար փորձում է աշխատել Միացյալ Նահանգների

---

[16] Panagiotopoulos P., Greek Ecumenical Movement-A Diaspora Experience, The prospects of diaspora in the globalizing world. International conference, collection of reports, Yerevan, 2011, p. 60.

[17]Turkish coalition of America, https://www.tc-america.org/about.htm

[18] Safran W., Diasoras in modern societies: Myths of homeland and return, Diaspora, A journal of transnational studies, Vol. 1, № 1, University of Toronto, 1991, p. 93.

Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի թուրքական հարցերով զբաղվող հանձնաժողովի հետ՝ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների զարգացման համար: Լոբբիստական կազմակերպությունը հենվում է նաև թուրքական կառավարության աջակցության վրա՝ Կոնգրեսին և Գործադիր իշխանությանը լոբբինգի ենթարկելու համար[19]: Թուրքական համայնքն ԱՄՆ-ում հատկապես ակտիվացել է վերջին տարիներին: Թուրքիայի ԱԳՆ տվյալներով՝ 2016 թ. դրությամբ արտերկրում գործում էր թուրքական 4439 միություն[20]: Ստեղծվեցին արտերկրի թուրք գիտնականներին միավորող կառույցներ, ինչպես, օրինակ, «Turkish American Scientists and Scholars Association» (TASSA), հիմն. 2004 թ.), նաև լոբբիստական կառույցներ՝ «Թուրք-ամերիկյան սփյուռքի խորհուրդը» (Türk Amerikan Diasporası Konseyi, հիմն. 2012թ.): Միությունների մեծ մասն ունի կրոնական ուղղվածություն, դրանց հաջորդում են գործարարներին, մտավորականներին, լրագրողներին և սոցիալական տարբեր շերտերի մեկ հարկի տակ միավորող հաստատությունները[21]: Կարևոր է այս համատեքստում նշել նաև, որ Թուրքիան խրախուսում է քաղաքացիական հասարակության նոր կազմակերպությունների ստեղծումը, որոնք պետք է Թուրքիայի պետական շահերի լոբբինգով զբաղվեն թուրքական սփյուռք ունեցող երկրներում: Այս կերպ, հանրային դիվանագիտություն բանացնելը դառնում է նոր պարտականություն, որը տրվում է սփյուռքի ընտրյալ խմբերին: Պետք է նկատել, որ հայրենիք-սփյուռք հարաբերություններում նման զարգացումներն օգուտ են բերում սփյուռքի այն խմբերին, որոնց կարելի է բնութագրել որպես իշխանամետ:

Լոբբիստական առանձին կառույցների ծավալած նպատակային գործունեության քննարկումից զատ, որպես լոբբինգի իրակա-

---

[19] McCormick J. M., Ethnic Interest Groups and American Foreign Policy; A Growing Influence? Principal Ethnic Lobbies, University of Kansas, p. 329.

[20] Սիմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Կ., Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2017, էջ 179:

[21] Նույն տեղում, էջ 181:

նացման մեկ այլ օղակ կարևոր է նաև ընդգծել ԱՄՆ-ի Կոնգրեսում գոյություն ունեցող կոնկրետ խնդիրներով ու հարցերով զբաղվող խորհուրդների առկայությունը. Կոնգրեսում օրինագծերի քննարկման, ընդունման կամ մերժման վրա մեծ ազդեցություն են ունենում հենց այդ խորհուրդների կոնգրեսական անդամների ձայները: 1996 թ. Ներկայացուցիչների պալատի անդամ Ք. Մալոնին և նույն կառույցի նախկին անդամ Մ. Բիլիրակիսը հիմնեցին Հելլենիկ խորհուրդը, որը զբաղվում էր Կոնգրեսում Հունաստանի շահերի առաջադրման խնդիրներով և որի նպատակն էր Միացյալ Նահանգներ-Հունաստան հարաբերությունների առաջընթացի ապահովումը: Ներկայումս Խորհրդի մեջ մտնում են 130 կոնգրեսականներ[22]: Նույն կերպ՝ Թուրքական Խորհուրդը զբաղվում է ԱՄՆ-ի ու Թուրքիայի հարաբերությունների բարելավման հարցերով և Կոնգրեսում ներկայացված՝ Թուրքիայի պետական շահերին հակասող օրինագծերի մերժմամբ: Թուրքական խորհրդի համանախագահներն են կոնգրեսականներ Ս. Քաբոթը, Ս. Քոհենը, Գ. Քոնլին, Ներկայացուցիչների պալատի անդամ Ջ. Ուիլսոնը. խորհուրդն ունի 109 անդամ[23]:

Դիտարկելով Կիպրոսի օրինակը՝ հարկ է նշել նաև երկու հակամարտող կողմերի շահերը պաշտպանող լոբբիստական խմբերի կողմից միմյանց հետ համագործակցային քաղաքականություն վարելու իրողությունը, ինչը հազվագյուտ երևույթ է: Օրինակ՝ 1977 թ. թուրք կիպրոսցիների կողմից ստեղծված HASDER մշակութային կազմակերպությունը, որը զբաղվում է նաև Կիպրոսի հունական ու թուրքական հատվածների ղեկավար մարմինների լոբբինգով, համագործակցում է այդ նպատակով գործող ոչ միայն թուրքական այլ կազմակերպությունների (մասնավորապես՝ MC-Med), այլև Կիպրոսի հունական երիտասարդական խմբերի ու կառույցների հետ՝ Կիպրոսի երիտասարդների միջև վստահության մակարդակի բարձրացման

[22] American Hellenic Council of California, https://www.americanhellenic.org/hellenic-caucus
[23] Turkish Coalition of America, https://www.tc-america.org/in-congress/caucus.htm

համար[24]: Վերոնշյալ փաստի տրամաբանական մեկնաբանություն կարող է ծառայել այն հանգամանքը, որ HASDER և MC-MED կազմակերպություններն ունեն լոկալ բնույթ՝ հիմնված են և գործունեություն են ծավալում Կիպրոսում: Մինչդեռ արտասահմանում գործող լոբբիստական խմբերը խոշոր քարոզչական պայքար են իրականացնում միմյանց և հակամարտող կողմերի դեմ: Ինչպես օրինակ հոդվածում դիտարկված ԱՄՆ-ում գործող հունական AHI-ին և թուրքական TCA-ը:

Պետք է ընդգծել նաև, որ լոբբիստական կառույցները կարող են դերակատարում ունենալ հետկոնֆլիկտային վերակառուցման գործընթացում՝ ֆոնդերի և դրամական փոխանցումների միջոցով հայրենիքի վերազինման գործում և նպաստել քաղաքացիական հասարակության կայունացմանն ու ամրապնդմանը: Ավելին, հյուրընկալող պետությունները, եթե շահագրգռված են հակամարտող երկրում խաղաղ գործընթացների զարգացման խթանմամբ՝ խրախուսում են նման գործողությունները: Վերոնշյալի օրինակներից է AHI-ի նախաձեռնությունը՝ տարեկան 25 մլն դոլարի մարդասիրական օգնության տրամադրում Կիպրոսին: Ինչպես նաև ջանքերը, որոնք 1995 թ. հանգեցրին ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող դրամաշնորհային օգնության վերացմանը[25]:

Այսպիսով, հոդվածում ներկայացված օրինակները ցույց են տալիս, որ սփյուռքը կարող է դառնալ հայրենիքի քաղաքականության «փափուկ ուժի» գործիք և անուղղակի ազդեցություն ունենալ հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վրա: Դրան նպաստում են արտերկրում գոյություն ունեցող լոբբիստական կազմակերպություններն ու խմբերը, որոնք կարող են համակարգել սփյուռքի մի ստվար հատված՝ հայրենիքի կողմից առաջադրվող կոնկրետ նպատակի իրագործման համար:

---

[24] Itrac.org, building trust across Cyprus divide, հասանելի է՝ 05.06.2019, https://www.intrac.org/resources/building-trust-across-cyprus-divide-stories-cooperation/

[25] American Hellenic Institute, https://www.ahiworld.org/who-we-are

VERONIKA TOROSYAN
(IOS)

ON THE ACTIVITY OF US GREEK AND TURKISH LOBBY ORGANIZATIONS OVER THE ISSUE OF NORTHERN CYPRUS

One of the most visible physical manifestations of growing globalization is the increase in the number of emigrants; about 232 million people live outside of their homelands. As a result of this kind of emigrations diasporas are formed. They provide new opportunities with which we can find solutions for many violent conflicts in the modern world. Rather than focusing on preserving and expanding conflict, it is necessary to explore and promote the potential of the diaspora and existing lobbying structures of it as an important force for promoting peace.

At present, lobbyist organizations have become important non-state actors in international affairs. They can provide moral and financial assistance or counteract the government of their homeland, become suppliers of weapons and even become members of the faction, whose interests they protect. They can support the government of their country in a state of war and boycott the products of their enemies in the international market. In quiet times, their financial transfers can make important additions to their household expenses.

In addition to influencing the host country-homeland relations, the Diaspora and its lobbyist groups can also influence the ethno-political conflicts in the homeland. Moreover, host countries, if they are interested in promoting the development of peaceful processes in a conflict-affected country, can encourage such "positive" actions.

The article attempts to show whether the existing lobbyist groups or lobbying individuals in the diaspora can be engaged in a "soft power" tool by the authorities of their homeland to achieve the desired solution on international political platforms, and if they are involved by homeland in such issues, do they have solid weight and influence in the process of resolution or aggravation of ethno-political conflicts?

To achieve these aims, in this article the relations between Turkish and Greek lobbyist organizations of the USA with their homelands and their role in resolving or aggravating of the problem of Northern Cyprus were studied.